

Հայկական գիտակիեռազգային համալսարան
Armenian Research & Academic Repository



Այս աշխատանքը պրեսերվացիա «Մեծահայտնային ճամանակներ»
ոչ առևտության գրանցագործության 3.0 պրեմիումը

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial-
ShareAlike 3.0 Unported License.

Դա կարող է լինել:


Կոմունիկատուածանության առաջնային միջազգային ստանդարտների
համարակալի համարակալի ուղարկություն առաջնային միջազգային ստանդարտների

You are free to:

Համարակալի համարակալի ուղարկություն առաջնային միջազգային ստանդարտների

Համարակալի համարակալի ուղարկություն առաջնային միջազգային ստանդարտների





Գ-16

Արմ. ԸՄ

Հ. Կ. Ե. Կ. Ե. Թանգօրուհու-Գեղջկուհու բաժին.

Հ 5 ԹԱՆԳՈՐՈՒՀՈՒ-ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ Հ 5

Իրավաբանական սերիա

Հ. ԳԱԼԻԿՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՕԵՐԵՎԱՆ-1926

Հ. Ա. Ա. Ա. Ա. Բանվորություն-Գեղջկություն բաժին.

Հ 5 ԲՈՂՈՎՈՐՈՒՅՈՒ-ԳԵՂՋԿՈՒՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ Հ 5

347.99(47)


գ 16

Իրավաբանական սերիա

Հ. ԳԱԼԻԿՅԱՆ

ԱՏՈՒԹՎԱԾ Է 1961 թ.

ԽՈՐՀՈՐԴԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԴՐՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1926

A II
11692

№ 327.

Դրառնապվար № 1.

Տիրած 3000

Գլուխացի առաջին տպարան Վաղարշապատում

1. Ի՞ՆՉ Ե ԻՐԱՎՈՒՆՔԸ.

Մեր ամենորյա կյանքում շատ անդամ ենք լսում իրավունքի և անիրավության մասին:

— Իրավունքը իմս ե.

— Դու իմ իրավունքը խլեցիր.

— Յես դիմում եմ դատարանին իմ իրավունքը պաշտպանելու համար:

Այս և նման խոսակցություններ անպակաս են թե գյուղում և թե քաղաքում: Յուրաքանչյուր կողմը պնդում է, վոր ինքն և իրավացի, վստահ ե, վոր դատարանն անպատճառ իր ողտին պիտի վճռի:

Տան տերը բնակարանային վարձ ե պահանջում. վարձակալը, վոր խորհրդային ծառայող ե, պնդում ե, վոր ինքը յերկու ամսից ի վեր անգործ ե և, հետեւաբար, ըստ զեկրետի ավելի քիչ պիտի վճարի, քան առաջ, յերբ ծառայության մեջ եր և ոռնիկ եր ստանում: Տան տերն սպառնում ե դատարանին դիմել և նրան վտարել բնակարանից վորպես անպարտաճանաչ տնվորի:

Բանվորը հեռացվում ե աշխատանքից, առանց նախազգուշացման, առանց հաշիվսերը մաքրելու: Բանվորը վստահ ե, վոր իրեն անիրավություն են արել, վոր դատարանը կպաշտպանի իր իրավունքը և կստիպի, վոր դարձյալ ընդունեն նրան ծառայության, վճարելով անգործ մնացած ժամանակի վարձը:

Գյուղացին դիմում ե հողային հանձնաժողովին և գանդատվում է, վոր իր հարեանը, առանց իր համաձայնությունն ստանալու, ցանել ե իր շնչապատկան հողը: Պահանջում ե, վոր հունձքի կեսն իրեն տրվի վորպես իր արտի վարձը:

Յեվ այսպես գրեթե ամեն որ և ամեն ժամ խոսվում ե իրավունքի, դատարանի մասին:

Բայց ի՞նչ ե իրավունքը, ի՞նչ ե ներկայացնում դատարանը, վորի իրավունքը պաշտպանում ե նա:

Խորհրդային իշխանությունը թույլ չի տալիս, վոր բանվորը շահագործվի, չի թողնում, վոր կուլակն ուտի բատրակի իրավունքը:

Ընդհակառակ, բուրժուական յերկրներում իշխանությունն աջակցում ե կալվածատերերին, հողատերերին ու գործարանատերերին, վոր

Նրանք որ ու գիշեր շահագործեն բանվորին ու չքավոր գյուղացուն, նրանց արյուն-քրտինք աշխատանքի արդյունքի մի չնչին մասը նրանց տան վորպես վարձ, իսկ մնացյալը յուրացնեն, իրենց գրալանը դնեն, դրանով իրենց կապիտալը, դրամագլուխն ավելացնեն:

Պրոլետարիատի իշխանության մեջ որենքն ու դատարանը պաշտպանում են աշխատավորության շահերն ու իրավունքներն ամեն տեսակ շահագործողների, սպեկուլյանտների վոտնձգությունից:

Մը հակառակ կապիտալիստական պետությունների մեջ ինչպես որենքը, նույնպես և դատարանը բնավ չեն մտահոգվում բանվորների և աշխատավոր գյուղացիների վիճակով. որենքն այստեղ հրատարակվում ե միմիայն հարուստների, ունեորների շահերը պաշտպանելու համար. դատարանն այստեղ կոչում ունի արդարացնելու բոլոր այն հաստափորներին, վորոնք չաղանում են, հարստանում են աշխատավորների արյունը ծծելով, նրանց ճակատի արդար քրտնքի արդյունքը սեփականացնելով:

Ի՞նչ ե հետևում սրանից.—այն, վոր իրավունքի մասին տարբեր կարծիքներ կան. այն, ինչ վոր բուրժուական յերկրում իրավունք և համարվում, մեզ մոտ, խորհրդային իշխանության մեջ կատարյալ անիրավություն ե համարվում:

Որինակի համար՝ բուրժուական բոլոր պետությունների մեջ հողանհատական սեփականության մեջ ե մտնում, և տնտեսապես ուժեղները՝ հողատերերն ու կալվածատերերն ամեն հնարավորություն ունեն չքավոր գյուղացիների հողերն իրենց ձեռքն անցկացնելու, չնչին արժեքով գնելու: Շնորհիվ այն հանգամանքի, վոր չքավոր գյուղացիները չեն կարող մրցել ունեոր կալվածատերերի հետ, վոր նրանք չունեն հողամշակության համար անհրաժեշտ անասուններ և մեքենաներ (կենդանի և մեռյալ ինվենտար), նրանք հարկադրված են լինում իրենց հողերը չնչին փոխարինությամբ վարձու տալու հողատերերին, նրանք ստիպվում են ծանր տոկոսով փոխառություն կնքելու և դրա փոխարեն իրենց հողը գրավ դնելու հարուստների մոտ: Շատ քչերին ե հաջողվում հետագայում վճարել իրենց պարտքը և ազատել իրենց սեփական հողը: Մեծագույն մասը ճարահատած ծախում ե իր հողը, ունեցած չնչին անասունը և իր իսկ հողի վրա վարձու բանվոր, բատրակ և դառնում:

Բուրժուական որենքը թույլ ե տալիս, վոր հողը կենտրոնանա վորոշ, փոքրաթիվ մարդկանց ձեռքում, վոր կամաց-կամաց սեփականագուրկ, հողագուրկ դառնան տնտեսապես թույլերը:

Յեթե այդ թույլերից մեկն ու մեկը փորձի դատարանին գանգատվել, վոր շատ չնչին գնով իր հողը խլված ե իրենից, վոր փողատերը վաշխառուական տոկոս և վերցրել նրանից, դատարանն ի վերջո

արդարացնում եւ հարուստին, կալվածատերին, գտնում եւ, վոր նրանք փրավունք ունեն: Գտնզատավորին մնում եւ վիզը ծուռ տուն վերադառնալ՝ համոզված, վոր դատարանը միայն հարուստի, ուժեղի համար եւ ոտեղծված:

Բոլորովին այլ կերպ եւ դրված դատարանը խորհրդային յերկրում:

Մեզ մոտ հողը պետության սեփականությունն եւ: Պետական այդ հողը, սակայն, տրվում եւ ոգտագործման բոլոր նրանց, ովքեր սեփական աշխատանքով շահագործում են այդ հողը: Խորհրդային որենքը թույլ չի տալիս, վոր աշխատավոր գյուղացու հողը վորեւ մեկը խլի նրանից, նա արգելում եւ վոր պարտքի փոխարեն ծախվի վորեւ մեկի շնչարաժին հողը: Յեթե կուլակը, վաշխառուն փորձի դատարանի միջոցով իր անիրավ պահանջները ձեռք բերել, խորհրդային դատարանը նրան կմերժի, պաշտպան կհանդիսանա տնտեսապես թույլին, կարգի կհրավիրի աշխատավորության նման թշնամիներին:

Աշխատավորությունը շատ լավ եւ ըմբռնում, թե ինչ հսկա տարբերություն կա բուրժուական և խորհրդային յերկրների մեջ: Աշխատավորությունը զայրութով և հիշում այն ծանր շղթաները, վորի տակ տնքում եր նախկին կառավարությունների որով:

Կար ժամանակ, յերբ կալվածատերն իրավունք ուներ իր հողի վրա ապրող և նրան կապված գյուղացիներին ծախել կամ փոխանակել զանազան ապրանքների—ձիու, կառքի կամ հողաշերտի հետ: Այդ առուծախսի ժամանակ կալվածատերը (պամեշչիկը) նույնիսկ կարող եր ամուսիններին, ծնողներին ու զավակներին բաժանել իրարից, մեկին ծախել ու մյուսին պահել:

Նիկալայ Լի իշխանության որոք թե որենքը և թե դատարանը պաշտպանում եյին կալվածատիրոջ այս անդթությունը, այս հանցագործությունը:

Գյուղացիության ազատազրումից հետո կալվածատերերը զրկվեցին այս «իրավունքից»:

Հիշյալ որինակից հասկացվում եւ, վոր միւնույն յերկրի մեջ եւ իրավունքի մասին յեղած հասկացողությունը փոխվում եւ ըստ տարբեր ժամանակների. այն, ինչ վոր տասնյակ տարիներ առաջ իրավունք եր համարվում, որենքով պաշտպանություն եր գտնում, հիմա ամենաչնչին համարվում, որենքով պաշտպանվում, ընդհակառակն՝ այդ տեսակ իրավունքի վրա չափով չի պաշտպանվում, ընդհակառակն՝ այդ տեսակ իրավունքի վրա հենվողները նույնիսկ պատժվում են:

Հարց եւ ծագում—ինչո՞ւ տարբեր յերկրներում և տարբեր ժամանակաշրջաններում իրավունքի մասին յեղած հասկացողությունները բոլորովին փոխվում են:

Այս հարցի պատասխանը շատ պարզ եւ:

Յերբ իշխանության զլուխը գտնվում են կալվածատերերը, նրանք Յերբ իշխանության զլուխը գտնվում են կալվածատերերը, նրանք

իրենց իրավունքը տարածում են ամրողջ հողի և բոլոր գյուղացիների վրա:

Յերբ իշխանությունն անցնում է կապիտալիստների ձեռքը, նրանք իրավունք են համարում շահագործել բանվորներին:

Իսկ յերբ բանվորն ու գյուղացին ապստամբում են կալվածատերի ու կապիտալի իշխանության դեմ, խորտակում են նրանց անարդ լուծը և իրենք են անցնում իշխանության գլուխը, անմիջապես աղատագրում են և հողը և աշխատանքը, հողը հայտարարում են պետության սեփականություն և տալիս են աշխատավոր գյուղացիության, պետականացնում են նաև բոլոր գործարաններն ու զավողները և վերջ դնում բանվորների շահագործմանը:

Սրանից հետեւում ե, վոր իշխանության գլուխ անցնող դասակարգը իրավունքին տալիս ե այնպիսի իմաստ, վոր համապատասխանում է իր դասակարգային շահերին: Յեթե տիրապետող դասակարգը կալվածատերերի դասակարգն ե, նա իրավացի յե համարում ամեն մի գործողություն, վոր նպաստում է իր դասակարգի շահերին, ամրացնում է իր իշխանությունը թե տնտեսապես և թե քաղաքականապես: Իսկ վորպեսզի նրա իշխանությունն ամրանա, յերկար կյանք ունենա, անհրաժեշտ ե, վոր նա շահագործի, զրկի մյուս դասակարգերին, գլխավորաբար գյուղացիությունը:

Յեթե իշխանության գլուխը գտնվում է կապիտալիստական դասակարգը, նա իրավունք ե համարում շահագործել թե բանվոր և թե գյուղացի դասակարգին, վորպեսզի նրանց ֆիզիկապես և տնտեսապես թուլացնի, տկարացնի և դրանով ավելի ևս ուժովցնի իր իշխանության հիմերը:

Վորպեսզի բանվորությունն ու աշխատավոր գյուղացիությունը կարենան վերջ դնել իրենց շահագործմանը, ստրկացմանը, նրանք պարտավոր են ձեռք-ձեռքի տված կովել շահագործող դասակարգերի դեմ, խորտակել նրանց իշխանությունը և հայտարարել բանվորա-գյուղացիական իշխանություն:

Իշխանության գլուխը անցնելուց հետո բնականաբար բանվորն ու գյուղացին կձեւակերպեն իրենց իրավունքը, վոր համապատասխանելու յե իրենց դասակարգային շահերին:

Թե իշխանություն ձեռք բերելու և թե այդ իշխանությունը պահելու համար ուժ ե հարկավոր: Պետք չե մոռանալ, վոր հասարակության մեջ գոյություն ունեցող տարբեր դասակարգերի շահերն իրար հակառակ են, հետեւաբար այդ դասակարգերից ամեն մեկը կաշխատի ուժով խլել իշխանությունը մյուսից: Յեթե իշխանությունը գտնվում է բուրժուազիայի ձեռքում, բանվորությունն ու աշխատավոր գյուղացիությունն ե, վոր կազմակերպվում են և հարմար բոլեյին ապստամբում բուրժուազիայի լուծը թոթափելու համար:

Յեթե պրոլետարիատն և իշխանության գլուխը, այդ դեպքում կապիտալիստներն ու կալվածատերերն են, վոր աշխատում են տապալել աշխատավորության ստեղծած իշխանությունը և դարձյալ տիրապետող դասակարգ դառնալ:

Այս և պատճառը, վոր իշխանությունն իր ձեռքում ունեցող ամեն մի դասակարգ, լինի դա կալվածատիրական, բուրժուական թե պրոլետարական, ստեղծում ե իր կազմակերպված ուժը, վորպեսզի նրա միջոցով զսպի իր հակառակորդներին, իր դասակարգային թշնամիներին և իր տիրապետությունը հավերժացնի:

Կազմակերպված այդ ուժը, վորի վրա հենվում է իշխանության գլուխը գտնվող դասակարգը, կոչվում է պետություն:

Պետությունը, ուրեմն, ուրիշ բան չե, յեթե վոչ տիրապետող դասակարգի զենքը: Այդ զենքի միջոցով իշխանության գլուխը գտնվող դասակարգը պաշտպանում է իր շահերը: Յեվ այն ամենը, ինչ վոր իր դասակարգի շահերին նպաստում է, դա միաժամանակ իր իրավունքն է:

Յեթե տիրապետող դասակարգի շահը պահանջում է հողը դարձնել անհատական սեփականություն կամ անխնա շահագործել վարձու աշխատանքը, նույնիսկ կանանց և յերեխաների, դա նրանց իրավունքն է: Իսկ ընդհակառակը, յեթե իշխանության գլուխը գտնվող դասակարգի շահը պահանջում է, վոր հողը, ջուրը, անտառները, յերկաթուղիները, մեծ ու փոքր գործարանները և այլն—լինեն պետության սեփականություն, այդ դեպքում այդ դասակարգն իրավունք է համարում արգելել հողի առուծախսը, պատժում է նման առուծախսով զբաղվողներին, սանձահարում է դատապարտում և վարձու աշխատանքը շահագործողներին:

Պարզ ե, ուրեմն, վոր իրավունքը դասակարգային և և կոչված է պաշտպանելու տիրապետող դասակարգի շահերը:

Յեթե բուրժուազիան և իշխողը, ապա իրավունքը բուրժուական և, նրա դասակարգային շահերն և պաշտպանում: Յեթե պրոլետարիատն և տիրապետողը, նրա իրավունքն ել պրոլետարական և, այսինքն պաշտպանում է պրոլետարիատի և նրա զինակից աշխատավոր գյուղացիության շահերն ընդդեմ կալվածատերերի և կապիտալիստների:

2. Ի՞ՆՉ Ե ԴԱՏԱՐԱՆԸ.

Ի՞նչ միջոցով և պաշտպանում տիրապետող դասակարգն իր շահերն ու իրավունքները: Միջոցներից մեկը—դա զինված ուժն և, բանակը: Բուրժուազիան ունի իր բանակը, վորի միջոցով խորտակում ե ապստամբ գյուղացիների և բանվորների դիմադրությունը, յերբ դեռ հարկ յեղած չափով կազմակերպված չեն նրանք: Այդ վարձկան ու ան-

զիտակից բանակի միջոցով ե, վոր նա ստրկացնում ե այլ աղքություններին, իր շահագործման համար դադութներ (կոլոնիաներ) և շուկաներ ե ստեղծում:

Բանվորազգուղացիական իշխանությունը ևս ունի իր բանակը—կարմիր բանակը, վորի միջոցով նա խորտակեց ներքին հականեղափոխականների—կալվածատերերի և բուրժուաների դիմադրությունը, իր սահմաններից վոնդեց արտաքին թշնամիներին, վորոնք աջակցում եյին հականեղափոխականների գործին:

Կարմիր բանակն այժմ ել արթուն հսկում ե, վորպեսզի վոչ վոք չփորձի հարձակվել աշխատավորության հայրենիքի վրա, չխանգարի դրա ստեղծագործական աշխատանքը:

Բայց կարիք չկա ամեն բոպե և ամեն դեպքում զինված ուժի ոգնությանը դիմելու: Իր շահերը պաշտպանելու, իր դասակարգային իրավունքներն իրականացնելու համար տիրապետող դասակարգերն ունեն նաև մի ուրիշ միջոց: Այդ միջոցը դատարանն է:

Դատարանի պարտականությունն ե կովել բոլոր նրանց դեմ, վորոնք խախտում են տիրապետող դասակարգի ձեակերպած իրավունքները, այսինքն այն իրավունքները, վորոնք կոչված են պաշտպանելու տիրապետող դասակարգի շահերը:

Ուրեմն դատարանն իշխանության մի մասնիկը, մի որգանն ե, վորի միջոցով իշխանության դլուխ գտնվող դասակարգն առաջ ե տանում իր քաղաքականությունը, իր գործը:

Յեվ քանի վոր պետությունը դասակարգային կաղմակերպված ուժ ե, հետևաբար դրա մի մասը կաղմող դատարանը նույնպես իր եյությամբ դասակարգային ե, այսինքն ստեղծվում ե տիրապետող դասակարգի կողմից, վորպեսզի պաշտպանե այդ դասակարգի իրավունքները թշնամի դասակարգերի դեմ:

Մեկ-յերկու պարզ որինակով բացատրենք մեր ասածը:

Ցարական դատարանները, վորոնք կոչված եյին պաշտպանելու միապետության ե, վոր միևնույն ե, կալվածատերերի և կապիտալիստների շահերը, անխնա պատժում եյին բոլոր նրանց—հեղափոխականներին, վորոնք աշխատում եյին տապալել այդ իրավակարգը:

Բուրժուական բոլոր յերկրներում այժմ դատարանները հարյուրավոր, հաղարավոր հեղափոխականների դատում-դատապարտում են, վորպեսզի դրանով պահպանեն բուրժուաղիայի դասակարգային տիրապետությունը, վորպեսզի դրանով առաջն առնեն պրոլետարիատի և գյուղացիության հաղթական հարձակումների:

Խորհրդային հանրապետության մեջ դատարանը, վորի պարտականությունն ե պաշտպանել աշխատավորության քաղաքական և տընտեսական շահերը, անխնա պատժում ե բոլոր հականեղափոխական-

ներին, վորոնք փորձում են լնասել, վոանդել Հռկտեմբերյան հեղափոխությամբ ձեռք բերված նվաճումները:

Բուրժուական դատարանը պատժում է գործադուլավոր բանվորներին, վորոնք աշխատում են հարկադրել գործարանատիրոջ պակասեցնել բանվորական որը կամ ավելացնել աշխատավարձը:

Խորհրդային դատարանը, ընդհակառակը, պատժում է բոլոր նրանց, ովքեր ստիպում են բանվորներին որենքով սահմանված ժամից ավելի յերկար աշխատել կամ ովքեր զեղչում են վորոշված աշխատավարձը. մի խոսքով՝ փորձում են շահագործել վարձու աշխատավորներին:

Հետեարար վոչ մի կասկած չկա, վոր ամեն ժամանակ, բոլոր յերկրներում և ամեն տեսակ պետությանց մեջ դատարանը դասակարգային քաղաքականություն տանող մի մարմին ե, վորը սկաշտպանում է իշխանության գլուխը կանդնած դասակարգի իրավունքները, շահերը:

Հակառակ այս փաստին չկա վորեւ բուրժուական որենսդրություն, վոր խոստովանի այս ճշմարտությունը:

Առհասարակ բոլոր բուրժուական որենսդիրները, իրավագետներն աշխատում են ծածկել այս իրողությունը, նրանք փորձում են համոզել ու ապացուցել, վոր դատարանը դասակարգային մի որդան չե, այլ համաժողովրդական, չեղոք ու անկախ մի հիմնարկություն, վորի առաջքոլորը հավասար են, վորի առաջնորդը միայն խիղճն ե ու արդարությունը:

Կասկած չկա, վոր բուրժուազիան շատ լավ գիտե, վոր իր ստեղծած դատարանները չեն կարող միաժամանակ պաշտպանել թե գործարանատիրոջ և թե բանվորին, թե կալվածատերին և թե չունեող դյուղացուն, թե իշխանության կողմնակիցներին և թե այդ իշխանության դեմ կովողներին: Բուրժուազիան շատ լավ համոզված ե, վոր թե իր կազմած որենքները և թե դրանցով առաջնորդվող իր դատարաններն արթուն կերպով հսկում են իր դասակարգի շահերի վրա: Բավական ե վոր մի ըոսկե անգամ բուրժուազիան համոզվի, վոր իր դատարանները չեն ծառայում իր սեփական շահերին, վորպեսզի վերջ տա նրանց գոյությանը:

Համոզված լինելով հանդերձ, վոր դատարանները բացառապես դասակարգային քաղաքականությամբ են առաջնորդվում, բուրժուազիան աշխատում է իրականությունը ծածկել, դատարանի դասակարգային դեմքը վարագուրել, վորպեսզի այդպիսով խարի դժգոհ, շահագային դեմքը վարագուրել, վորպեսզի այդպիսով խարի դժգոհ, շահագային դատիր դասակարգերին — բանվորությունն ու չունեող դյուղացիությունը դասակարգերին մթագնի, խավարի թյունը, նրանց դասակարգային գիտակցությունը մթագնի, խավարի մեջ պահի:

Այս հետին մտքից դրդված ե, վոր բուրժուազիան ճշմարտությունը

չի խոստովանում, կեղծում և ասելով—«բոլոր քաղաքացիները հավասար են որենքի և դատարանի առաջ»:

Միմիայն խորհրդային իշխանությունն ե, վոր վոչ միայն չի ծածկում, այլ, ընդհակառակն, շեշտում ե, վոր առհասարակ բոլոր դատարանները, նույնպես և խորհրդային դատարանները դասակարգային որդաններ են, դասակարգային նպատակի յեն ծառայում։

Վորպեսդի լիովին համոզվենք սրան, բավական ե բաց անել և կարդալ մեր Սահմանադրութան 10-րդ հոդվածը, վորտեղ գրված ե։—

«Բուրժուական իրավակարգն ու արդարադատությունն արմատախիլ անելու և պրոլետարիատի ու աղքատ գյուղացիության դիկտատուրան սահմանելու և պաշտպանելու համար, վերացվում են հականեղափոխական նախկին կառավարությունների բոլոր որենքներն ու դատարանները և փոխարեն՝

ա. Բանվորա-գյուղացիական իրավունքի աղբյուր ճանաչվում է խորհրդային որենսդրությունը, սոցիալիստական իրավահայեցողությունն ու հեղափոխական խիղճը։

բ. Արդարադատության հիմք ընդունվում ե միասնական ժողովրդական դատարանը, հիմնված աշխատավոր մասսաների դասակարգային կազմակերպությունների վրա, միաժամանակ ճանաչելով արտակարգ արդարադատության անհրաժեշտությունը, բանվորա-գյուղացիական հեղափոխության գերազույն շահերի պաշտպանության համար։

Հայաստանում խորհրդային իշխանության հայտարարությունից գրեթե անմիջապես հետո, 18 դեկտ. 1920 թվին հրատարակվեցավ հրաման, վորով «Հ. Ս. Խանրապետության սահմաններում գոյություն ունեցող բոլոր դատական հիմնարկությունները լուծված հայտարարվեցին»։

Յերկու որ հետո, դեկտեմբերի 20-ին հրատարակվեցավ հեղկոմի դեկրետը, հետևյալ բովանդակությամբ։—

1. «Հայաստանի հանրապետության սահմաններում վերանում ե «Ռուսական կայսրության Հավաք Որինացը» այն բոլոր փոփոխություններով, վոր մտցրել եյին ժամանակավոր կառավարությունը, Անդրկովկասյան Սեյմը և Հայաստանի Խորհուրդը, պարլամենտն ու կառավարությունը։

2. «Հ. Ս. Խանրապետության սահմաններում գործող որենքներ համարվում են Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության որենքները այն փոփոխություններով և լրացումներով, վոր կմտցնի Հայաստանի հեղկոմը և այլ իրավասու իշխանությունները։

Հայաստանի հեղափոխական աշխատավորությունը իշխանության գլուխն անցնելուց հետո բնականաբար չեր կարող թույլ տալ, վոր ի-

ըենց գոյությունը պահեյին ցարական, կերենսկու կառավարության և դաշնակցական իշխանության ժամանակ գործող որենքներն ու դատարանները, վորոնք կոչված եյին ծառայելու միապետության, կալվածատիրության և բուրժուազիայի շահերին, այն որենքներն ու դատարանները, վորոնց զոհ եյին գնացել տասնյակհազարավոր աշխատավորներ, հեղափոխականներ։ Այդ ե պատճառը, վոր բանվորազյուղացիական իշխանությունն անմիջապես վերջ տվեց թե՛ հին որենքներին և թե՛ դատարաններին, հրատարակելով նոր որենքներ և ստեղծելով այնպիսի դատարաններ, վորոնց պարտականությունը պետք ելիներ վերջնականապես արմատախիլ անել բուրժուական իրավունքն ու արդարադատությունը և պաշտպանել պրոլետարիատի և չունեորդյուղացիության դիկտատուրան, այլ խոսքով՝ տիրող դասակարգիշահերը։

Խորհրդային Հայաստանի, ինչպես նաև բոլոր խորհրդային հանրապետությունների մեջ միևնույն տեսակի դատարաններ և որենքներ գոյություն ունեն։ Քանի վոր հեղափոխական աշխատավորության թե՛քաղաքական և թե՛ տնտեսական շահերը միևնույն են, ուրեմն և անբընական և անիմաստ պիտի լիներ տարրեր որենքների և տարրեր կազմակերպություն ունեցող դատարանների գոյությունը։

Յեթե բաց անենք խորհրդային բոլոր հանրապետությունների դատարանների կազմության (դատարանակազմության) կանոնագրքի հոգվածը, այնտեղ պիտի կարդանք հետևյալը։—

«Պրոլետարական հեղափոխության նվաճումները պաշտպանելու և պետության շահերն ու աշխատավորների և նրանց միությունների իրավունքներն ապահովելու համար ե, վոր հիմնված են դատական հիմնարկությունները։»

Սրանով հեղափոխական աշխատավորությունն ի լուր աշխարհի հայտարարում ե, վոր բուրժուական յերկրների դատարանները ծառայում են միայն կապիտալիստների և կալվածատերերի դասակարգային շահերին։ Խորհրդային դատարաններն ել ծառայում են և պիտի ծառայեն միմիայն հեղափոխության և աշխատավորության շահերին։

Սրանով մի անգամ ընդ միշտ դատարանը հայտարարվում է դասակարգային։

Դասակարգային նպատակի յեն ծառայում նաև մեր բոլոր որենքները, մեր բոլոր որենսդրքերը։

Մեր Քրեական Որենսգրքի 5-րդ հոդվածում ասվում է— «Քրեական Որենսգրքի նպատակն ե պաշտպանել աշխատավորների պետությունը հանցանքների և հասարակության վտանգավոր տարրերի գեմացնությունը համար։»

Ո՞վքեր առհասարակ կարող են վտանգավոր լինել աշխատավորության համար։— ընականաբար բոլոր նրանք, վորոնց դասակարգա-

յին շահերը հակառակ են պրոլետարիատի և չունեոր գյուղացիության շահերին:

Նույն դասակարգային նպատակին ծառայում են նաև քաղաքացիական որենքները: Մեր Քաղաքացիական Որենսգրքի հենց առաջին հոդվածի միտքն այն է, վոր դատարանը պաշտպանում է միայն այնպիսի իրավունքներ, վորոնցից ոգտվելը նպաստում է աշխատավորության հայրենիքի շահերին, այսինքն աջակցում է յերկրի արտադրական ուժերի զարգացումին:

Այդ զարգացման հիմնական նպատակն է ժամանակի ընթացքում վերջ տալ մասնավոր կապիտալին, ուժեղացնել սոցիալիստական տընտեսությունը, պետության ձեռքում կենտրոնացնել արտադրության բոլոր միջոցները և այդպիսով մարդկությունն առաջնորդել զեպի ապագա կոմմունիստական իրավակարգը, յերբ այլևս չեն լինելու դասակարգեր, տիրողներ և տիրապետվողներ, շահագործողներ և շահագործվողներ:

Ի՞նչ է ասում Քաղաքացիական Դատ. Որենսգիրքը, վորով առաջնորդվում են մեր դատարանները: —

Որենսգրքի 5-րդ հոդվածը պարտականություն է դնում դատարանի վրա, վոր նա լիովին աջակցի իրեն դիմող աշխատավորներին և պաշտպանի նրանց իրավունքներն ու շահերը:

Այլևս վոչ մի կասկած, վոր մեզ մոտ թե որենքները և թե դատարաններն աշխատավոր դասակարգի համար են ստեղծված և նրա շահերին են միայն ծառայում:

3. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ.

Վորպեսզի դատարանները կարողանան իրենց վրա դրված պարտականությունը կատարել, այսինքն ծառայել տիրապետող դասակարգի շահերին, անհրաժեշտ ե, վոր նրանք համապատասխան կազմ ունենան, այսինքն կազմված լինեն այնպես, վոր իշխող դասակարգը վըստահ լինի իր դատավորների վրա:

Այս ե պատճառը, վոր ամեն յերկրում, ամեն պետության մեջ առանձին ուշադրություն և դարձվում դատարանի կազմի վրա:

Բուրժուական իշխանությունը չի կարող իր շահերի պաշտպանությունը հանձնել բանվոր և գյուղացի դատավորներին, յերբ համոզված է, վոր նրանք պատկանում են ուրիշ դասակարգի, մի դասակարգի, վորն աշխատում է քանդել բուրժուազիայի իշխանության հիմերը՝ նրան տապալելու և նրա տեղ անցնելու համար:

Նույն և նաև խորհրդային իշխանության համար:

Աշխատավորությունն իր դասակարգի շահերը չի կարող հանձնել

այնպիսի մարդկանց պաշտպանությանը, վորոնք իրենց շահերով ու զգացումներով կապված են բուրժուազիայի հետ, վորոնք հարազատ չեն աշխատավորության, ատում են նրա իշխանությունը:

Բուրժուազիան, ինչպես առիթ ունեցանք բացատրելու, հայտարարում ե, վոր իր դատարանների համար բոլոր քաղաքացիները հավասար են: Հակառակ, սակայն, այս կեղծավորությանը, բուրժուազիան դատավորներ նշանակում ե իր դասակարգին պատկանողներից, այն ել այնպիսիներին, վորոնց վրա կատարյալ վստահություն ունի:

Բուրժուազիան իրավունք ունի այդպես վարվելու. նրա դասակարգային շահն այդ ե պահանջում:

Նույն իրավունքն ունենք նաև մենք: Աշխատավորությունն իր դատավորներին ընտրում ե աշխատավորության առաջավոր և գիտակից տարրերից և նրանց վրա դնում ե պարտականություն դասակարգային մոտեցում ունենալ ամեն մի դատական գործին, այն ե՝ պաշտպանել միայն այնպիսի իրավունքներ, վորոնց պաշտպանությունը համապատասխանում ե բանվորության և աշխատավոր գյուղացիության շահերին:

Մենք առանց քաշվելու հայտարարում ենք, վոր մեր դատարանների կազմը դասակարգային բնույթ ունի, և նրա համար բոլոր քաղաքացիները հավասար չեն:

Ամենքը գիտեն, վոր մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը բոլոր դատավորները (հաշտարար դատավորից սկսած մինչև սենատի անդամները) առհասարակ կամ կալվածատերեր և կամ ազնվականներ եյին: Ամենքը հիշում են նույնպես, վոր քաղաքական, պետական հանցագործությունները քննելու պարտականությունն ունեցող դատարանների կազմի մեջ մտնում եյին դատական պալատի նախագահը և չորս անդամները, նաև նահանգային և գավառային ազնվականության ավագները, քաղաքագլուխը և շրջանային ստարշինան, մի խոսքով՝ տիրապետող դասակարգի ամենահարազատ տարրերը:

Իր դասակարգային հակառակորդներին դատելու համար միավետությունն ավելի վստահելի մի դատական կազմ չեր կարող գտնել:

Աշխատավորությունը նվազ նախանձախնդիր չե իր դատավորի ընտրության նկատմամբ: Դատավոր լինելու համար պահանջվում ե, վոր վորևե քաղաքացի ա) ունենա խորհուրդների անդամ ընտրելու և վոր վորևե իրավունք. բ) վոր նա ամենաքիչը յերկու տարի պատասընտրվելու իրավունք. բ) վոր նա ամենաքիչը յերկու տարի պատասխանատու քաղաքական աշխատանք տարած լինի բանվորագյուղացիական կամ կուսակցական կազմակերպությունների մեջ:

Այս յերկու պայմաններ լրացնողներն արդեն հարազատ են լինում աշխատավորության և պատրաստ՝ իրենց վրա վերցնելու այն պատասխանատու աշխատանքը, վոր կրվում և դատավորների վրա:

Ո՞վ ե ընտրում դատավորներին: Բուրժուական յերկրներում առհասարակ արդարադատության մինիստրն ե նշանակում դատավորներին:

Խորհրդային հանրապետությունների մեջ դատավորներն ընտրվում են: Ժողովատավորներին ընտրում են դավդործկոմները, իսկ Գլխավոր և Գերագույն դատարանի անդամներին հաստատում ե Կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախագահությունը:

Ինչպես հայտնի յե, ինչպես գավառական գործադիր կոմիտեները, նույնպես և կենտրոնական Գործադիր կոմիտեն բանվորների, զյուղացիների և կարմիր-բանակայինների պատգամավորական ժողովների կողմից են ընտրվում, և նրանց ե վստահում աշխատավորությունն իր բախտը թե կենտրոնում և թե տեղերում: Ահա աշխատավորության այդ ներկայացուցիչներն են, վոր իրենց կողմից ընտրում են դատավորներին, նրանց վրա դնելով պարտականություն՝ պաշտպանելու պրոլետարական պետության կենսական շահերը: Բնականաբար գործկոմները դատավորի կոչումը տալիս են միայն այն քաղաքացիներին, վորոնք լավագույն կերպով կարող են ծառայել աշխատավոր դասակարգերի շահերին:

Դատավորներին ընտրելուց հետո գործկոմները հետևում են նրանց գործունեյությանը՝ իմանալու համար, թե նրանք ինչ չափով են արդարացնում իրենց վրա դրված հույսերը. և յեթե տեսնեն, վոր նրանք հարկ յեղած գիտակցությամբ և նախանձախնդրությամբ չեն ծառայում աշխատավորությանը, անմիջապես յետ են կանչում նրանց, ավելի պատրաստված և անձնվեր ուժերին հանձնելով հեղափոխության և աշխատավորության շահերի պաշտպանությունը:

Ընտրական այս յեղանակը ցույց ե տալիս, թե բանվորագյուղացիական իշխանությունն առանձին ուշադրություն ե դարձնում դատարանների կազմի վրա և նրան տալիս ե զուտ դասակարգային որդանի կերպարանք:

4. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐ.

Մեր դատարանները հենված են աշխատավորական մասսայի դասակարգային կազմակերպությունների վրա: Դրա մեկ ապացույցն այն ե, վորի մասին վերև խոսեցինք: Բացի այդ կա նաև ուրիշ ապացույց:

Մեր արդարադատության հիմը կազմող միասնական ժողովատարանը շատ քիչ գործ ե քննում միանձնաբար: Առհասարակ գործերը քննվում են յերեք հոգով: Նրանցից մեկը ժողովատավորն ե, վոր նախագահում ե դատական նիստերի ժամանակ և ղեկավարում նիստը, իսկ մնացյալ յերկուսը ժողովրդական ատենակալներ են:

Ո՞վքեր են այդ ատենակալները և ինչու յեն նրանք մասնակցում դատավարությանը:

Խորհրդային դատարանը, ինչպես հայտնի յե, աշխատավորության շահերը պաշտպանելու համար և ստեղծված: Բայց աշխատավորությունը չի ուղղում կտրված լինել իր դատարանից. ընդհակառակն, նրա շահը պահանջում է վոչ միայն մոտիկից հետեւ արդարադատության գործին, այլ նաև մասնակցել այդ աշխատանքին:

Աշխատավորությունը, հետեւաբար, ընտրում է իր ներկայացուցիչներին, վորոնք մտնում են դատարանի կազմի մեջ վորպես ժողատեսակալներ:

Ժողատեսակալները վոչ այլ ինչ են, յեթե վոչ դատավորներ. տարբերությունն այն է միայն, վոր դատավորներն ամբողջովին նվիրված են արդարադատության գործին, վորն իրենց հիմնական աշխատանքն է, մինչդեռ ժողատեսակալները միայն ժամանակավորապես ստանձնում են դատավորական պաշտոնը, տարվա մեջ միայն վեց որ մասնակցելով դատական նիստերին:

Իրենց մասնակցության ընթացքում ժողատեսակալները միևնույն իրավունքներն ու պարտականություններն ունեն, ինչպես մշտական դատավորը, վճիռները կայացվում են մեծամասնության կարծիքի համաձայն, իսկ մեծամասնությունը, ինչպես հայտնի յե, ժողատեսակալներն են ներկայացնում:

Ժողատեսակալներն աշխատավորության ծոցից զալով դատարան, իրենց հետ տանում են աշխատավորության կարծիքը և դատավարության ժամանակ ու վճիռ կայացնելիս նրանք նկատի յեն առնում աշխատավորության տրամադրությունն ու ցանկությունը:

Ժողատեսակալների միջոցով մի մնայուն և կենդանի կապ և ստեղծվում աշխատավոր դասակարգի և նրա շահերի պաշտպանությունն ստանձնող դատարանի միջև. Փաստորեն աշխատավորության հավաքական կամքն է, վոր ժողատեսակալների միջոցով արտահայտվում և դատում է:

Ո՞վքեր կարող են ժողատեսակալ լինել:

Ժողատեսակալ լինելու համար պետք է ունենալ իրավունք խորհուրդներին անդամ ընտրելու և ընտրվելու: Սրանից յերեսում է, վոր ժողովրդական ատենակալներ կարող են լինել միայն աշխատավորները: Աշխատավորության թշնամի տարբերը զրկված են թե դատավոր և թե ժողովրդական ատենակալ լինելու իրավունքից. նրանք այդ բարձր կոչման արժանի չեն:

Մենք իմացանք, վոր դատավորներին ընտրում են գործկոմները: Նույն գործկոմներին կից կազմվում են հատուկ հանձնաժողովներ, վորին նախագահում ե տեղական գործկոմի նախագահը, արհեստակցա-

կան միության ներկայացուցչի և ժողովատավորի անդամակցությամբ։ Այդ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են ան դատախազը։ Ահա այս հանձնաժողովի պարտականությունն եւ պատրաստել և լրացնել ժողատենակալների ցուցակները։ Համաձայն որենքի, ժողատենակալներից $50^{\circ}/_0$ -ը բանվորներ և խորհրդային պաշտոնյաններ, $35^{\circ}/_0$ -ը դյուղացիներ և մնացյալ $15^{\circ}/_0$ -ը կարմիր բանակայիններ են լինում։

Այս ձեռվ արդարադատության գործին անմիջական ձեռվ մասնակցում են բանվորությունը, գյուղացիությունը և Կարմիր բանակը, մեկ խոսքով՝ ամրող աշխատավորությունը։

Ժողատենակալների ցուցակները կազմելիս առանձին ուշադրություն եւ դարձվում, վոր գեղջկուհիներն ու բանվորուհիները հնարավոր յեղածին չափ մեծ թվով ընտրվեն ատենակալ։ Մասնավորաբար ընտանեկան, ամուսնական և խնամակալական գործերի քննության ընթացքում ժողատենակալուհիներին մեծ դեր եւ վերապահված։

Աշխատավորության շահը պահանջում ե, վոր ժողովրդական ատենակալ ընտրվածները պարտաճանաչ գտնվեն, գիտակցաբար կատարեն իրենց դատավորի պարտականությունը և գործոն մասնակցություն ցույց տան դատավարության ժամանակ։

Վորքան նախանձախնդիր վերաբերմունք ցույց տան ժողատենակալները, այնքան ավելի հաստատ հիմքերի վրա դրված կլինի խորհրդադային արդարադատության գործը, այնքան ավելի խորհրդային դատարանը կլինի իր կոչման բարձրության վրա։

5. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ.

Դատախազության հիմնական պարտականությունն եւ պետության անունից հսկել իշխանության բոլոր մարմինների, տնտեսական հիմնարկությունների, հասարակական և մասնավոր կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր քաղաքացիների գործողությունների որինականության վրա։ Այդ հսկողության նպատակն եւ սուսպել, թե աշխատավորության անունից և նրա համար գործող մարմինները վորքան ճշտորեն կատարում են աշխատավորության կամքը։ Վորևէ հանցագործություն յիրեան հանելիս դատախազությունը հանցագորների դեմ դատական գործ եւ սկսում նրանց պատճելու համար, դատախազությունը մասնակցում եւ դատարանի գործունեյությանը։ Քրեական գործերի քննության ժամանակ նա դատարանում պետության անունից պահանջում եւ հանցագործների դատապարտությունը։ Քաղաքացիական գործերի քննությանը ևս ներկա յել լինում դատախազը և իր յեղբակացությունն եւ տալիս՝ պետության և աշխատավոր դասակարգի տնտեսական շահերը պաշտպանելու համար։

Դատախազությունն աջակցում է դատարաններին և միաժամանակ հսկում է նրանց գործունեյության վրա:

Այսպիսով ավելի հաստատ հիմքը վրա յե դրվում խորհրդային արդարադատության գործը:

6. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Հ. Ա. Հ. Հանրասկետության սահմաններում յերկու տարրեր կատաղորիաների պատկանող դատական հիմնարկություններ կան: Առաջին կատեգորիային պատկանում են ընդհանուր դատարանները, վորհիմնված են միասնական սիստեմի վրա:

Ընդհանուր դատարանները հետեւյալներն են.

1. Ժողովրդական դատարան,
2. Գլխավոր դատարան և
3. Գերազույն դատարան:

Կան գործեր, վորհայում և ժողովատավորը միանձնաբար, այսինքն մենամենակ, առանց ժողովրդական ատենակալների: Բացի մի շարք քրեական գործերից, ժողովատարանը միայնակ քննում է հետեւյալ գործերը.—մեռածներից հետո մնացած գույքի պահպանման, միջնորդ դատարանների տված վճիռներին, ավանդներին, ամուսնալուծության վերաբերող քաղաքացիական գործերը:

Հիշյալ գործերից դուրս մնացած բոլոր գործերը, բացի Գլխավոր և Գերազույն դատարաններին թողնված գործերը, ժողովատավորը էնում և յերկու ատենակալների մասնակցությամբ:

Առուծախսի, վարձակալության, ապրուստի, յերաշխավորության, ժառանգության գործերը, ինչպես նաև բազմաթիվ քրեական հանցագործություններին վերաբերող պատժական գործերը քննվում են ժողովատարանի կողմից, ժողովատավորի նախագահությամբ և յերկու ժողովատենակալների անդամակցությամբ:

Գլխավոր դատարանը նույնպես գործերը քննում է ժողովրդական առենակալներով: Սպանության, բռնաբարության, զեղծարարության՝ կարեւը գողությունների, պետական ծառայողների յուրացումների, կառագի և այլն գործերը քննելու պարտականությունը դրված է Գլխավոր դատարանի վրա:

Գլխավոր դատարանի իրավասությանը հանձնված են նաև հետեւյալ քաղաքացիական գործերը.—500 ռուբլուց ավելի արժեք ունեցող պահանջներ, գործկոմների դեմ սկսած դատեր, ընկերության գործեր և այլն:

Գերազույն դատարանը քննում է կոմիսարիատների դեմ սկսված գործերը, ինչպես նաև կենտրոնական Գործադիր կոմիտեյի անդամների:

Գերազույն դատարանը հիշյալ գործերը քննում է նույնպես ժողովատենակալների մասնակցությամբ:

Բացի այս պարտականությունից Գերազույն դատարանն ունի նաև այլ պարտականություններ:

Ժողղատարանների և Գլխավոր դատարանի վճիռներից դժողոհ մնացողներն իրավունք ունեն գանգատվելու Գերազույն դատարանին, վորքեկման կարգով նայում ե գործին: Յեթե Գերազույն դատարանը գտնի վոր որենքը խախտված է, և անարդար վճիռ ե տրված, փոխում ե վճիռը և գործն ուղարկում ե համապատասխան դատարանին նորից քննելու համար: Գերազույն դատարանը հաստատում ե վճիռը, յեթե որենքի վորևե խախտում չկա:

Գերազույն դատարանը բեկման գործերը քննում ե առանց առենակալների, մնայուն դատավորներով:

Գերազույն դատարանը վորպես ամենաբարձր դատարան հսկում է մնացած բոլոր դատարանների գործունեյության վրա, նրանց տալիս ե հարկ յեղած հրահանգները և ի հարկին պարզաբանում: Բացի հիշյալ ընդհանուր դատարաններից կան նաև հատուկ դատարաններ: Այդ դատարանները քննում են այնպիսի գործեր, վոր պահանջում-են հատուկ մասնագիտություն և փորձառություն:

Հատուկ դատարանները հետևյալներն են.—

1. Զինվորական տրիբունալ, վոր քննում ե կարմիր բանակի ամրությանն ու զորությանն սպառնացող հանցանքների վերաբերյալ գործերը:

2. Աշխատանքային դատարաններ, վորոնք քննում են վարձուաշխատանքին վերաբերող բոլոր վեճերը և այն քրեական գործերը, վոր սկսվում են աշխատանքի որենքները խախտողների դեմ:

Աշխատանքի դատարանները կազմված են յերեք հոգուց. նրանցից մեկը ժողովրդական դատավոր է, վոր նախագահում ե դատական նիստերին, իսկ յերկու անդամներից մեկը տեղական պրոֆմիության, իսկ մյուսը աշխատանքի կոմիսարիատի տեղական բաժնի ներկայացուցիչներն են:

Աշխատավարձի, Ակադեմիացիայի (լուծարքի), արձակուրդի, մի խոսքով՝ աշխատանքի պաշտպանության հետ կատված բոլոր գործերի համար պիտի դիմել աշխատանքի դատարանին:

Առայժմ աշխատանքի հատուկ դատարաններ բացված են Յերևանում և Լենինականում: Մնացյալ վայրերում աշխատանքային գործերը քննում են ժողովրդական դատարանները, դարձյալ պրոֆմիության և տեղական աշխատանքի բաժնի ներկայացուցիչներով:

Աշխատանքի տեսուչներն իրավունք ունեն ներկայանալու աշխատարանին և մեղաղքելու նրանց, ովքեր խախտում են աշխատանքային որենքները:

3. Հողային հանձնաժողովները քննում են հողային գործերին վերաբերող վեճերը:

Հողաշինարարության ընթացքում առաջացած բարոր վեճերի, հողի ոգտագործման իրավունքի հետ կապված դատելիք, ծխի հողի բաժանության և այլն վեճերի քննությունը հատկապես խողնված և հողարին հանձնաժողովներին:

Կան դավառային, դավառական և Գլխավոր հողային հանձնաժողովներ:

4. Կա նաև Արքիտրաժ Հանձնաժողով, զոր քննում և լուծում և պետական հիմնարկությունների և ձեռնարկությունների միջև ծագած վեճերը:

Վերոհիշյալ բոլոր դատարաններն իրենց առընթերդունական թյամքը ընդհանուր նպատակ են հետապնդում։ Նրանց բոլորի պարտականությունն և ծառայել աշխատավորության շահերին, պաշտպանել հեղափոխության նվաճումները, ամրացնել պրակտական պետության հիմերը։



—

347. 99
Գր - 16

Մեկ օրինակ



ԳԻՒԾ 15 ԿՈՊԵԿ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0014530

A 11692